ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Եդեսիայի թագավորության ծագումը թեմայի դասավանդումը պատմության անիվ մեթոդի միջոցով»:

Կատարող՝ Սաթենիկ Կիրակոսյան

(ուսանողի անուն, ազգանուն)

Ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Արշավիր Գասպարյան

(անուն, ազգանուն, գիտական աստիճան, կոչում)

(ստորագր.)

Գնահատում եմ_____միավոր

«___»_____2023թ _____

(ղեկավարի ստորագրությունը)

Գյումրի 2023

Ներածություն

Ասորիները արամեական ցեղերի այն հետնորդներից են, որոնք Սելևկյան պետության թուլացումից հետո մ.թ.ա. երկրորդ դարում ստեղծել են իրենց փոքր իշխանությունները, որոնցից ամենահայտնին Եդեսիայի իշխանությունը կամ թագավորությունն էր:[1] Եդեսիա քաղաքի հիմնադրման մասին պահպանվել են մի քանի ավանդություններ: Դրանցից մեկի համաձայն՝ Եդեսիան հիմնադրել է Բելը, ըստ մի այլ ավանդության՝ այն կառուցվել է Աստվածաշնչում հիշատակված Ուր քաղաքի ավերակների վրա և Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Սելևկոսի դստեր Էդեսեի անունով էլ կոչվել է Եդեսիա:[2] Հունական և հռոմեական պատմագիրների ասելով՝ Եդեսիան հիմնադրել է Ասորիքի Սելևկոս թագավորը (մ.թ.ա. 4-րդ դ.): Եդեսիայի թագավորության պատմության վերաբերյալ կարևոր տվյալներ կան ասորական երկու ժամանակագրություններում: Ժամանակագրություններից մեկը պատմագիտությանը հայտնի է Դիոնիսիոս Տելլ-Մահրացու ժամանակագրություն անունով, որովհետև այն գրի է առնվել ու պահպանվել IX դարի Անտիոքի ասորի պատրիարք Տելլ-Մահրացու պատմական երկում: Երկրորդը պատմաբաններին ծանոթ է «Եդեսիայի ժամանակագրություն» վերնագրով: Ըստ Տելլ-Մահրացու ժամանակագրության, ասորիներն առաջին անգամ թոթափում են Սելևկյանների լուծը և ստեղծում իրենց թագավորությունը «Աբրահամի 1880-րդ տարում» (մ.թ.ա 137 թ.): Նույն աղբյուրի տվյալների համաձայն, ասորական քաղաքական առաջին իշխանության «հիմնադիրն է եղել Հեվիայի որդի Օրհայը, որը թագավորել է հինգ տարի»: Դրան հակառակ «Եդեսիայի ժամանակագրության» տվյալներով ասորի առաջին թագավորը Առյուն է, որ գահ է բարձրացել Սելևկյանների 180 թ. (մ.թ.ա 132թ.): Եդեսիայի առաջին թագավորի մասին տեղեկություններ է պահպանել նաև VI դարի բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին: Նա գրում է. «Գետի այս կողմը գտնվող (երկիրը), որը (Եփրատի) և Տիգրիսի մեջտեղում է, բնական է, կոչվում է Միջագետք, որի մի մասն ունի այլ անուն ևս. այսպես, մինչև Ամիդ քաղաքն (ընկած շրջանները) ոմանք անվանում են Արմենիա, իսկ Եդեսիան իր շրջակայքով կոչում Օսրոենե՝ Օսրոեսի անունով, որն անցյալում թագավորել էր այնտեղ, երբ այդ երկիրը դաշնակից էր պարսիկներին»:[3] Եդեսիայի իշխանությունը պատմությանը հայտնի է նաև Օսրոենեի իշխանություն անունով: Եվրոպացի պատմաբաններից Գ. Բայերը, հիմնվելով Տելլ-Մահրացու և Պրոկոպիոսի վկայությունների վրա, գալիս է այն եզրակացության, որ Օսրոենե անունը առաջացել է այս թագավորության հիմնադիր Օրհայից (կամ ինչպես պարսկերենում է՝ Օսրոյից կամ Խոսրովից): Ռ.Դյուվալը իր

---

[1] Մելքոնյան, 1970: էջ 34
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ.1, 1971, էջ 568
[3] Մելքոնյան, 1970: էջ 35

«Եդեսիայի պատմության» մեջ առաջ է քաշում այն միտքը, որ Տելլ-Մահրացու տվյալները պատմական հիմքեր չունեն և հետևանք են Միջագետքում պարթևների ազդեցության ուժեղացման, իսկ այդ զրույցն էլ առաջացել է այն ժամանակ, երբ տեղական մանր իշխաններն ու թագավորները իրենց դիրքերն ամրապնդելու և հեղինակությունը բարձրացնելու նպատակով զրույցներ էին հորինում իրենց պարթևական ծագումն ընդգծելու և պարթևական արքունիքին հաճոյանալու համար: Այնպես որ, XIX դարի ֆրանսիացի այս գիտնականի կարծիքով Օրհան կամ Օսրոյը երևակայական անձնավորություն է, և Օսրոեն անունը գործածության մեջ է մտել մ.թ. IV դարում, երբ բյուզանդացիները, Միջագետքը երկու մասի բաժանելով, Ամիդն իր շրջակայքով անվանեցին Միջագետք, իսկ Եդեսիան իր շրջակայքով՝ Օսրոենե: Իր այս ասածը հիմնավորելու համար նա վկայակոչում է վաղ շրջանի ասորի և հույն պատմիչներին, որոնք Եդեսիայի թագավորությունը Օսրոենեի թագավորության անունով չեն հիշատակել: Ասորի պատմիչները, այն էլ ուշ շրջանի, շատ հազվադեպ են գործածել Օսրոենե անունը: Ասորիները, որպես կանոն, իրենց երկիրն անվանել են Բեյտ-Նահրին: Հատկանշական է, որ հայ պատմիչները նույնպես, որոնք հաճախ են օգտվել ասորական աղբյուրներից, ոչ մի տեղ և ոչ մի անգամ չեն հիշատակել Օսրոենե անունը: Նրանք այդ երկիրն անվանել են Միջագետք կամ Միջագետք Ասուրց:[4] Ասորիների հետ այնքան ամուր և երկարատև կապերի մեջ եղած հայերի՝ Օսրոենե անվան անիմացությունը խոսում է Ռ.Դյուվալի ենթադրության օգտին, թեև հարցը լուծված չի կարելի համարել, որովհետև V դարի մեր աղբյուրները, նշելով Միջագետքի երկուսի բաժանումը, այնուամենայնիվ չեն հիշատակում Օսրոենե ձևը: Ըստ երևույթին, Օսրոենե անվանումը հիմնականում գործածության մեջ է մտել ոչ թե IV, այլ VI դարում՝ Հուստինիանոսի օրոք: Հնարավոր է, որ Օսրոենեի թագավորության վերացումից հետո, երբ վարչական փոփոխություն է կատարվում, և Օսրոենեն որպես առանձին իշխանություն վերացվելով միացվում է Հռոմեական կայսրությանը որպես Արևելյան նահանգ, այլևս չի գործածվում նաև Օսրոենե անունը: Միայն Հուստինիանոսի վարչական փոփոխություններից հետո Միջագետքի մի մասը կրկին վերանվանվում է Օսրոենե, այս անգամ արդեն իբրև վարչական միավոր:[5] Եդեսիայի ժամանակագրության տվյալների համաձայն մ.թ. 50-57 թթ. Եդեսիայի գահի վրա բազմել է Մաղնու Ե-ն, իսկ 57-71 թթ. մոտ 14 տարի իշխել է նախորդի եղբայր՝ Մաղնու Զ-ն: Նրան հաջորդում է որդին՝ Աբգար Զ-ն, որը թագավորում է 71-91 թթ.: Աբգար Զ-ի մահվանից հետո, նա ժառանգորդ չի ունենում և այդ պատճառով երկպառակություն է սկսվում երկրում, և երկու տարի շարունակ ներքին կռիվների պատճառով ոչ ոքի չի հաջողվում իշխանության գլուխ կանգնել: Ի վերջո, Պարթամասպատը տիրանալով գահին իշխում է 3 տարի և 10 ամիս: Պարթամասպատին անմիջապես հաջորդում է Իզատեսի որդի Մաղնուն և մնում է գահի վրա 16 տարի և 8 ամիս: Տելլ-Մահրացու վկայությամբ, Աբգար Զ-ից հետո 18 տարվա ընդմիջում է լինում, և հայտնի չէ, թե երկիրը ինչպես է կառավարվում: 18

[4] Նույն տեղում: էջ 36
[5] Նույն տեղում: էջ 37

տարուց հետո, այս նույն աղբյուրի վկայությամբ, Եդեսիայի գահին է բազմում Իզատեսի որդի Աբգար Է-ն և իշխում է 6 տարի և 9 ամիս, այսինքն՝ մ.թ. 109-116 թթ.: Տելլ-Մահրացու վկայությամբ, Աբգար Է-ից հետո է գահին բարձրանում Պարթամասպատը: Հետաքրքրական է, որ Իզատեսի որդու՝ Եդեսիայի գահին բազմելու առթիվ, ֆրանսիացի ասորագետ Դյուվալը գրում էր. «մեր թվարկության առաջին դարի վերջից Եդեսիայում իշխանության գլուխ է անցնում հայ-պարթևական մի ճյուղ, և այն սկսում է Իզատեսի որդի Աբգարով և շարունակվում է Պարթամասպատով և վերջանում է Իզատեսի որդի՝ Մաղնուով: Այս ճյուղը, _ գրում է նա, ծագում է Ադիաբենեի հայտնի Հեղինե թագուհու Իզատես որդուց, որն ընդունել էր հրեական կրոնը»:[6] Ըստ Մովսես Խորենացու, Եդեսիան մ.թ.ա. 1 թվականին հիմնովին վերակառուցել է Հայոց կիսաավանդական թագավոր Աբգարը՝ Մծբինից այստեղ տեղափոխելով իր արքունիքը և բոլոր կուռքերը՝ Նաբոգը, Բելը, Բաթնիքաղը, Թարաթան: Նա Աբգար թագավորին ոչ միայն հայ է համարում, այլև նրան դիտում է պատմական անձ, որն այնտեղ թագավորել է մ.թ.ա. 1-ից մ.թ. 37 թթ.: Խորենացին նաև հավաստում է. որ Եդեսիայի Աբգար թագավորը նամակագրություն է ունեցել Հիսուս Քրիստոսի հետ և Հիսուս Քրիստոսին հավատացել է առանց իսկ նրան տեսնելու: Լսելով միայն նրա կատարած հրաշքները, նա Հիսուս Քրիստոսին հրավիրել է Եդեսիա, բայց Հիսուս Քրիստոսը չի կարողացել նրա խնդրանքը կատարել անձամբ, այլ Եդեսիա է ուղարկել իր Թադեոս առաքյալին: Վերջինս Աբգար թագավորին բուժել է, նրան ու իր քաղաքը դարձի է բերել ի Քրիստոս, ապա շարունակել իր քարոզչությունը բուն Հայաստանում և նահատակվել Հայոց Սանատրուկ թագավորի կողմից ու թաղվել Արտազ գավառի Շավարշան դաշտում: Ըստ Խորենացու Թադեոս առաքյալը նահատակվել է Սանատրուկ թագավորի քրիստոնյա դստեր՝ Սանդուխտի հետ միասին:[7] Խորենացին Սանատրուկի մասին տալիս է հետևյալ տեղեկությունը. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս»:[8] Ռ. Դյուվալը գտնում է, որ Ա. Գուտշմիդտը ճիշտ է, երբ Մովսես Խորենացու հետևողությամբ Եդեսիայի 18 տարիների ընդմիջումը կապում է Սանատրուկի հետ, այսինքն այդ տարիներին նա պետք է իշխած լինի Հայաստանից բացի՝ Եդեսիայի և Ադիաբենեի վրա:[9] Այս կապակցությամբ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ եթե Իզատեսի մայրը՝ Հեղինեն ամուսնացել է իր եղբոր՝ Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսի (Մանավազ) հետ, որը Վաղարշ Ա-ի հարազատն էր, ուրեմն, նա Հայաստանի թագավոր Տրդատ Ա-ի հարազատն էր նաև: Խորենացու վկայությամբ Սանատրուկը Աբգարի քրոջ որդին էր, և եթե Հովսեպոս Փլավիոսի տվյալներով Հեղինե թագուհու եղբայր և ամուսին Մոնոբազոսը (Մանավազ) Խորենացու Աբգարի հետ նույն անձնավորությունն է, ապա կարելի է ասել, որ Տրդատ Ա-ի մահից հետո Հայաստանի թագավորական գահին բազմած Սանատրուկը

[6] Մելքոնյան, 1976: էջ 51
[7] Մովսես Խորենացի, 1990: էջ 93, 95
[8] Նույն տեղում: էջ 100
[9] Մելքոնյան, 1976: էջ 52

Տրդատի հարազատներից էր: Հայտնի է նաև, որ Պարթևստանի Վաղարշ Ա արքայից հետո, ինչպես Ադիաբենեի, այնպես էլ նրա հարևան թագավորական գահերի վրա հիմնականում բազմել են նրա արյունակից հարազատները, և ստեղծված նման քաղաքական միջավայրում պարթևների ազդեցությունը շատ է ուժեղանում, և ամեն մի իշխող ընտանիք, որ ձգտում էր ղեկավար դիրքի հասնել, փորձում էր իր ծագումը կապել պարթևների հետ, և ասորի պատմիչի մոտ եղած հետևյալ արտահայտությունը այդ մտայնության արդյունքն է. «պարթևները կամ պարսիկները պարթևներն ու ասորիները պարթևներն ու հայերը նույնն են»:[10] Դեռևս XIX դարի ֆրանսիացի պատմաբան Ջ. Սեն-Մարտենը, իր երկհատորանոց «Արշակունիների պատմության հատվածներ» գրքում հունական, հայկական, ասորական աղբյուրների տվյալների հիման վրա եկել է այն եզրակացության, որ Եդեսիայի թագավորությունը հայկական պետականությանը ենթակա մի իշխանություն էր և մեր թվականության սկզբներից նրա գահին տիրել են հայ-պարթևական ծագում ունեցող թագավորներ: Եղել են ժամանակներ, ճիշտ է կարճատև, երբ Եդեսիայի պետությունը պարզապես միացված էր Հայկական թագավորությանը: Եդեսիայի թագավորների ցուցակը, որը մեզ է հասել ասորական վերոհիշյալ երկու ժամանակագրություններում, մեր թվարկության 91-109 թթ. Եդեսիայի թագավորի անուն չի հիշատակում: Արտահայտվել են կարծիքներ, որ այդ 18 տարիների ընթացքում Եդեսիայի պետությունը կազմում էր Հայոց թագավորի իշխանության մի մասը, և որ մեր թվականության 109թ. Եդեսիայում Աբգար VII-ից սկսած հայերն են իշխել:[11]Անանուն Եդեսացին իր «Ժամանակագրության» մեջ նշում է, որ Հռոմեական կայսրությանը ենթարկվելուց հետո ընդհատվել է Ուռհայի թագավորների սերունդը: Նրանք ծագում էին Սելևկիոսից, որը Նեմրովթից հետո վերակառուցել էր Ուռհան: Չգտնվեց որևէ հույն, ո ր անցներ իշխանության գլուխ: Եվ քանի որ Ուռհայում բնակություն հաստատած և հզորացած հայերը հավատարիմ էին մնացել հունաց թագավորությանը, նրանց ազգից մեկին, որի անունն էր Աբգար, թագավոր հռչակեցին: Սա և իր սերունդները 380 տարի տիրեցին Ուռհային և Միջագետքին: Նրանցից շատերը կոչվեցին Աբգար, առաջին թագավորի անունով: Հենց այդ ժամանակներում եկավ և աշխարհում հայտնվեց Քրիստոսը, երբ Հռոմում թագավորում էր Օգոստոս կայսրը, իսկ Ուռհայում թագավորում էր այս Աբգարը՝ Մանուի որդին, որն իր գույնի թխության պատճառով կոչվում էր Ուքամա:[12] Աբգար VII-ի իշխանության տևողությունը հայտնի է ասորական «Ժամանակագրություն»-ից: Ռ.Դյուվալը, հիմնվելով Շարբիլի Վարքում եղած այն վկայության վրա, որ Տրայանոսի թագավորության XV տարին և Աբգարի III տարին համընկնում են, եզրակացնում է, որ Աբգար VII-ը գահ է բարձրացել 109թ.: Տելլ-Մահրացին ցույց է տալիս, որ նա թագավորել է 6 տարի և 9 ամիս, հետևաբար Աբգար VII-ի թագավորության տարիներն են 109-116 թթ.:[13] Այս կապակցությամբ հետաքրքրական է Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, որ Սանատրուկ անունով թագավոր Հայաստանում թագավորել

[10] Նույն տեղում: էջ 52
[11] Մելքոնյան, 1970: էջ 38
[12] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.2, 1982: էջ 195
[13] Մելքոնյան,1970: էջ 39

է ոչ թե մեր թվարկության II դարի վերջերին, այլ 75-110թթ.:[14] Մ.թ. II դարի պատմիչ Տակիտոսը իր «Տարեգրություններ»-ի մեջ Եդեսիայի թագավոր Աբգարին կամ Ակբարին անվանում է «արաբների թագավոր»: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ հռոմեացի պատմիչ Պլինիոսը ասորիներին կոչում է «Ուռհայի արաբներ, որոնք ապրում են Եփրատից երեք «շեն» հեռավորության վրա և իրենց քաղաքներն են Եդեսիան ու Կարրհենը (Հարրան, Խառան)»:[15] Հայկական ավանդությունների համաձայն, Եդեսիան կառուցել է Հայոց Տիգրան արքան: Հայտնի է, որ մ.թ.ա. 95-55 թթ.՝ Տիգրան Բ-ի օրոք Հայաստանը նվաճեց հարևան շատ երկրներ ու դարձավ այդ ժամանակի հզորագույն քաղաքական ուժերից մեկը: Նրա ախոյանները միայն Հռոմն ու Պարթևստանն էին: Մյուս հարևան երկրները գտնվում էին նրանցից կախյալ վիճակում: Մթ.ա. 94 թ. Տիգրան Բ-ն արդեն գրավեց Ծոփքը. մ.թ.ա. 93-91 թթ.՝ Կապադովկիան: Ապա ընկճեց պարթևների դիմադրությունը և նրանց դուրս մղեց Հայոց «յոթանասուն հովիտներից» և Հյուսիսային Միջագետքից, որտեղ գտնվում էր Եդեսիան: Մ.թ.ա. 84 թվականին Մեծ Հայքին միացան Ասորիքը. Հյուսիսային Միջագետքը (Միգդոնիան՝ Մծբին, և Օսրոենեն՝ Եդեսիա կենտրոններով)[16]: Այս թվականը Եդեսիայի՝ Մեծ Հայքի մեջ մտնելու և նրա հայկականացման սկիզբն է: Փաստ, որը հաստատում է նաև հույն պատմիչ Ստրաբոնը: Վերջինս նաև հավաստում է, որ մինչև մ.թ.ա. 84 թվականն էլ այդ վայրերում արդեն հայ ստվարաքանակ բնակչություն է եղել:[17] Եդեսիան ևս միացնելով Մեծ Հայքին, Տիգրան Բ-ն այնտեղ ևս հայեր բնակեցրեց: Մ.թ.ա. 66 թ. հռոմեական զորավար Պոմպեոսը Ասորիքն ու Հյուսիսային Միջագետքը գրավեց Տիգրանից, բայց երկու տարի հետո Հյուսիսային Միջագետքը (Օսրոենեն Ծավդեքով հանդերձ) վերստին հանձնեց Հայաստանին, կարծում ենք, հաշվի առնելով նաև այդ վայրերի բնակչության մեջ հայերի մեծամասնություն կազմելու հանգամանքը:[18] Եդեսիան առնվազն մինչև Տիգրան Մեծի մահը (մ.թ.ա. 55 թ.) եղել է Հայաստանի կազմում: Ոչ մի փաստ չկա, որ Տիգրան Մեծի մահից հետո մինչև մ.թ. 37 թվականը Հայոց Միջագետքը Եդեսիայի հետ միասին կտրված է եղել Հայաստանից, բայց, ահա, ըստ հավաստի պատմագիտական տվյալների, մ.թ. 37թ. Հռոմի և Պարթևստանի միջև կնքված պայմանագրով 312.795 կմ^2 տարածք ունեցող Մեծ Հայքից անջատվում են Հայոց Միջագետքի տարածքները (մոտ 27.000 կմ^2) և Եդեսիայի հետ միացվում Պարթևստանին (Մեծ Հայքի տարածքը դրանով փոքրանում և հասնում է 285,195 կմ^2):[19]

---

[14] Մանանդյան, հ.2, 1957: էջ 19
[15] Մելքոնյան,1970: էջ 36
[16] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971: էջ 554-564
[17] Ստրաբոն, 2011: էջ 14,15
[18] Մանանդյան, 1971: էջ 223-224
[19] Հայ ժողովրդի պատմություն, հ.1, 1971: էջ 719

Ուրեմն, մ.թ.ա. 55 թվականից մինչև մ.թ. 37 թվականը Եդեսիան շարունակել է առավելապես գտնվել Մեծ Հայքի կազմում և այդ ընթացքում եղել է նրա հետ մշակութային, տնտեսական, առևտրային հարաբերություններով սերտաճած վիճակում, մանավանդ իր գերազանցապես հայ ազգաբնակչության շնորհիվ: Այլ կերպ ասած մ.թ.ա. 84-ից -մ.թ. 37 թթ. Եդեսիան հայկական քաղաք էր: Խորենացին 37 թ. Հայաստանից Հայոց Միջագետքի (ներառյալ Եդեսիայի) անջատումը համարում է Հայաստանի երկու մասի բաժանում:[20]Ուշագրավ է, որ հայկական վաղ շրջանի աղբյուրներն էլ Օսրոենեի թագավորությունը կամ քաղաքները հայկական են համարում: Փավստոս Բուզանդը իր «Հայոց պատմության» մեջ գրում է, որ երբ Հայոց Պապ թագավորը «խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին պարսից», պատգամավորներ ուղարկեց Հունաց թագավորի մոտ և հայտնեց, որ «Կեսարիաւ հետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր և զՈւռհա քաղաք շինեալ նախնեացն մերոց»:[21] Հետաքրքրական է, որ ասորական «Ադդայի վարդապետության» հայերեն հին թարգմանության մեջ նույնպես Եդեսիայի թագավորությունը հայկական է համարվում:[22] Թե որքան հայկական էր Եդեսիան դարձել վերոհիշյալ ժամանակաընթացքում, որի արդյունքում մ.թ.ա. 1-ից առ մ.թ. 37 թթ. նրա կառավարիչն ազգությամբ հայ էր, երևում է հետագա տասնամյակներում պատահած շատ դեպքերից հատկապես այս մեկով. 37-91 թթ. այնտեղ կառավարիչներ եղան նաև ազգությամբ ասորիներ, ինչն անհանդուրժելի էր հայության համար: Եվ ահա, 91-109 թթ. բուն Հայաստանում իշխած Սանատրուկ Հայոց թագավորը 91 թ. Եդեսիայի Աբգար Զ ասորի թագավորին (կառավարչին) գահընկեց արեց և ինքը թագավորեց այնտեղ, որի պատճառով էլ Սանատրուկ Բ-ն կոչվեց «Մեծն թագավոր Հայոց Մեծաց եւ Եդեսիոյ»:[23] Այսպիսով վերը բերված փաստերը բավարար են ապացուցելու համար, որ մ.թ.ա. 84-ից - մ.թ. 37 թթ. Եդեսիան մեծմասամբ գտնվել է Մեծ Հայքի կազմում, նրա տնտեսա-առևտրային, մշակութային ազդեցության տակ և սերտաճած է եղել նրան նաև իր գերազանցապես հայ ազգաբնակչությամբ:

[20] Մովսես Խորենացի, 1990: էջ 100
[21] Փավստոս Բուզանդ, 1987: էջ 292
[22] Մելքոնյան, 1970: էջ 39:
[23] Մանանդյան, հ.2, 1978: էջ 18-19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Փավստոս Բուզանդ, 1987, Պատմութիւն Հայոց, Երևան:
2. Մովսես Խորենացի, 1990, Հայոց պատմություն, Երևան:
3. Հայ ժողովրդի պատմություն, հ.1, 1971, Երևան:
4. Մանանդյան Հ., 1957a, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հ.2, Երևան:
5. Մանանդյան Հ., 1971b, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան:
6. Մելքոնյան Հ., 1970a, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան:
7. Մելքոնյան Հ., 1976 b, Ասորական աղբյուրներ, Երևան:
8. Ստրաբոն, 2011, Աշխարհագրություն, Հայաստանի ու հայերի մասին, Երևան:
9. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.2, 1982, Երևան: